

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ա. Հ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Հիանդ

Գրավոր առաջին վկայությունները Մր. Գրիցի են, մինչդեռ բարբառային բաշխումը և սահմանափակ չէ: Աճառյանը նախապես վերականգնել է **hxiwand* ձևը (ՀԱԲ², III, 98), բայց հետագայում հրաժարվել է դրանից (ՀԱԲ², IV, 634) ու համեմատության մեջ դրել հուն *πεγομαι* «տառապել, շարձարանքով աշխատել» բառի հետ՝ կանխադրելով **pen* արմատից կրկնված **pi*րո- նախած: Սակայն հայերեն բառի կազմությունը կրկնություն չի հիշեցնում, այլ միայն -անդ (*-nt) ածանցով բաղադրված բառ: Դա էլ միանշանակ չի կարելի համոզեցնել նախալեզվին, որովհետև նույնաբան ածանցը գործածական է նաև իրանական լեզուներում: Արդ, պետք է պարզել, թե որ արմատի արտացոլումն է *hxi*-ը: Ընդհանուր առմամբ և՛ մինչև Աճառյանը, և՛ նրանից հետո հայտնված տեսակետները երկու բնույթի են. մի մասը հանգում է *h-*-ե. **pe(i)-*, **pi-* «ցավել, վնասվել» արմատին (Pokorny, 1959, 792-93), մյուսները՝ պիլ-xindg (*), xivandak (*)-ին (տե՛ս ՀԱԲ², III, 98):

Թվում է, անհնար չէ վերը նշված *hxi*- արմատի դիմաց դնել *h-*-ե. **qu*և-ից ծագող *h.* հնդկ. *jiva*- «ողջ», *h.* պրսկ. *jiva*, ավ. *jiva*-նույն *նշ.*, հուլ. *zivd*, լիտ. *gyvas*, լատ. *vivus* (հմմտ. ֆր. *vivant* «ողջ, կենդանի») Օսկ. *bivus* և մյուս գուգահեռները, իսկ ամբողջի համար վերականգնել **yi*want վաղ միջին իրանական նախօրինակը՝ «ողջ, կենդանի» իմաստով (հմմտ. մանիք. միջ. պրսկ. *ji*wand-, պիլ. *zy*wand-): Այս դեպքում, ուրեմն, հայերենի սկզբնական գրչագրական տարբերակը պետք է եղած լինի **ji*wand ձևը: Մա նշանակում է, որ իմաստային ելակետը այս դեպքում ոչ թե «ցավ»-ն է, այլ «ողջ»-ը, այսինքն՝ ի սկզբանե էական է դիտվել «ողջ»-«մեռած» հակադրությունը, և ըստ էության ավելի ուշ՝ միայն հայերենում է տեղի ունեցել իմաստային նեղացումը:

Տարակ

Այս բառը գրաբարյան բնագրերում (Մր. Գիրք, Բ. Մակաբայեցուց, Ժ. 36, Երզ երգոց, Ե. 2) ունեցել է «առատ տեղացող անձրև, ձյուն կամ ցող» նշանակությունը (ՀԱԲ², IV, 384): Եղած ստուգաբանական փորձերը շատ պարզունակ են և վստահություն չեն ներշնչում: Բառի ստուգաբանության համար որոշակի հենման կետ կարող է ծառայել միջինհայերենյան աղբյուրներում բազմիցս գործածված տարակ/փ բժշկական տերմինը՝ «տևական փորլուծություն» իմաստով, որ բխում է արաբ. *darab*-ից, նույն նշանակությամբ (տե՛ս Մուշեղյան, ԲԵՀ, 1995, թիվ 3, էջ 25):

Հին շրջանի տարակ-ը ըստ երևույթին փոխառված է հյուսիս-արևմտասեմական մի լեզվից՝ կամ ասորերենից, կամ եբրայերենից, թեև նման բառույթ այդ լեզուների բառամթերքը արտացոլող բառաբաններում չհաջողվեց գտնել: Կարող ենք միայն մատնանշել արաբերեն զուգահեռը՝ *darafa* «հոսել, հորդել, հեղել» և միևնույն ժամանակ արձամագրել, որ արաբերենում *drf* և *drb* բառույթները, ըստ էության, ստուգաբանական կրկնակներ են:

Փիճխ

Միջինհայերենյան բնագրերում գործածվող բուսանուններից մեկն է իր բազմաթիվ համանիշներով՝ մայրիփայտ, կվեմի, մարխ, չամ, փիճի, նաշք, սանուպար (*Pinus Pinea* L.):

Ստուգաբանական փորձերը սակավ են. Ալիշանը հնարավոր է համարում *փիլեք* խոտաբույսի հետ նույնացումը (Հբուս. 3063), որ արդարացիորեն հերքում է Աճառյանը (ՀԱԲ, IV, 504): Մեր կողմից ավելացնենք, որ դա իսպառ բացառվում է, թեկուզ այն պատճառով, որ փիճխին ծառանուն է և հետո *փիլեք*-ը (<պրսկ. *picak*) ավելի հին փոխառյալ գույզի՝ *պիճակ*-ի (<միջ. պրսկ. *picak*) հետ միասին և ս տեղ է գտել միջնադարյան բժշկարաններում և նշանակում է «մի տեսակ բաղեղ» (*Convolvulus* կամ *Hedera Helix* L.):

Բառին առանձին ստուգաբանական փորձով անդրադարձել է Գ. Ջահուկյանը՝ գտնելով, որ այն ունի ակնհայտ վրացական կերպարանք, թեև *picxi* «ցախ»-ի հետ իմաստով քիչ է համապատասխանում, իսկ *picvi* «մի տեսակ մայրի» բառը հայերենի մեջ մտել է *փիճի* ձևով (ՊԲՀ, 1991, թիվ 2, էջ 43):

Մինչդեռ Պ. Մուրադյանը իր «Ստուգաբանական սրբագրումներ» («Լրաբեր», 1993, թիվ 3, էջ 105) հոդվածի մեջ ենթադրում է զանազան աղբյուր՝ առնչելով վրաց. բ'իօx-ի «տաքարյուն, դյուրաբորբոք» (հին վրացերենում «թծ, բարկ») ածականի հետ, որից էլ վերախնաստավորվել է մոտավորապես այնպես, ինչպես հայերենում **տաքդեղ-ը** կամ **կճան-ը** (*):

Այն, որ «բարկ, թծ» հասկացությունը կարող էր բուսական համար նշանակելի ծառայել, հավանական է, բայց ոչ այն պարագայում. չնոսանանք, որ **փիճխ-ն** ծառանուն է: Ավելի ճիշտ կլինի այդպիսի փոխհարաբերություն փնտրել «տաշեղ. կաչան» և «բունկվող, պոռթկուն, դյուրաբորբոք» հասկացությունների միջև և այդ դեպքում -c-ով և -c-ով ձևերը դիտել որպես զուգաբանություններ, որոնք կամ կորցրել են իրենց նախնական հատկանիշական նշանակությունը, կամ հակառակը՝ ավելի ուշ են ձեռք բերել:

Բայց և այնպես վրաց. բ'իօx-ի «ցախ. կաչան. տաշեղ» (մեզր. picx- «ցախ») և վրաց. բ'իօx- «պոռթկուն, դյուրաբորբոք» բառերի հարաբերությունը վերջնականապես պարզված չէ (տե՛ս Դ. Ա. Климов, 1990, с. 10): Հնարավոր է արդյոք սրանց մերձեցումը հին շրջանում իմաստային գետնի վրա, թե ոչ, դեռ կարիք ունի լրացուցիչ քննության: Մինչդեռ լիովին պարզ է, որ քարթվեական երկու տարբերակներն էլ՝ և բ'իօx-ն և *բիօx-ն, արձանագրվել են միջինհայերենյան աղբյուրներում, երկու դեպքում էլ՝ որպես ծառանուն: Եթե հենվենք Վաստակոց գրքի վրա, որ փոխադրում է հուն. σφειδαμος | resp. σφειδαμνος «թխկի» ձևից, ապա պետք է ընդունենք, որ **պիճխ** և նման ձևերը նշանակել են «թխկի», այնինչ **փիճ/խի-ն** միջինհայերենյան աղբյուրներում միշտ դրվել է սանոպար անվան կողքին՝ որպես համիմաստ անուն:

Ուրեմն ո՞րն է ելքը: Ամենայն հավանականությամբ դեռ հին շրջանից սկսած քարթվեական ծառանունները բնորոշվել են իմաստային տարաբերությամբ, ինչպես որ najvi/nazvi անվան դիմաց դրվում է «նայրի», «սոճի», «եղևնի»:

Վերջապես նշենք, որ Աճառյանը Վաստակոց գրքից համելով սրա սխալագիր տարբերակները՝ **միճխ, մծխ, մցխ**, առանձին բառառոպածով մտցնում է իր Արմատական բառարանի մեջ՝ **միճու** գլխարանի տակ, որ պետք է բացատել (ՀԱԲ, III, 321):

Վերն ասվածին ավելացնենք, որ հայերենի բրբռ. **փիճա** «փոքրիկ, ճստիկ» բառն, ըստ երևույթին, նույնպես քարթվեական հիշված ձևի արտացոլումն է և թերևս ածանցված է «տաշեղ» իմաստից:

А. Г. МУШЕГЯН.- Этимологические заметки.- Арм. hiwand “больной” имеет долгую историю письменного свидетельства. Сложилось два подхода к этимологизированию данного слова. Одни исследователи склонны видеть в нем самостоятельное образование от и.-е. корня* re(i)-, pi- “болеть”, другие от пехл. xindg (?), xivandak (?).

Автор статьи придерживается мнения, согласно которому слово это выводимо из ранне-среднеармянского *uıwant, наследниками которого являются маних.- среднеперсидский juwnd “живой”, пехл. zuwnd “живой” и т. д. Из этого вытекает, что изначальный писменный вариант в армянском имел форму* uıwand и означал “живой, немертвый”.

Древнеарм. tağar “ливень, снежный поток” не имеет сколько-нибудь серьезной этимологии (Ачарян, 1979: IV. 384). Кажется, опорным пунктом для этимологизации данной лексемы может служить среднеарм. tağar/p°, встречающийся как медицинский термин со значением “хронический понос”, заимствованный из арабского dağar с тем же значением (Мушегян, 1995, ВЕУ: 3, с. 25). Но нужно учитывать, что у древнеармянского tağar՝ нейтральное функционирование и то, что звуковой облик наводит нас на северо-западно-семитский источник-сирийский или же еврейский, особенно учитывая то, что оно впервые зафиксировано в армянском переводе Библии. Хотя в глоссариях упомянутых языков не удалось найти ту же лексему, однако можно быть уверенным в этом, имея в виду арабскую параллель dağafa “течь, литься, проливать (слезы)” и вместе с тем констатировать, что араб. daf и daf являются этимологическими дублетами.

Слово բ'իօxի//բիօxի употребляется в средневековых источниках и именуется некое дерево, синонимы которого указывают на сосну (Pinus Pinea L.). Анализируя предыдущие этимологизации, автор привлекает новый материал, а именно картвельский второй вариант բիօxի, встречающийся в армянском переводе средневекового труда Геопоника, предположительно делая вывод, что оба являются изоглоссами, причем у обоих вариантов на современном этапе сохранены различные значения: груз. բիօxի “вспыльчивый” и мегр. բիօxի “хворост” (ср. груз. բիօxի “сухой хворост; щепка”).